



Աղքամարի ս. Խոչ վանիք Վահագու-
րականում.

Eglise de Sourp-Chatsch d'Achtha-
mar (Arménie-Turque).




Աղքամարի ո. Խաչ վանիք.

Eglise d'Achthamar. (Arménie-Turquie).




Գագիկ Արծրունի թագավորի բարձրաժամ-
դակը Աղքամառի և Խաչ եկեղեցու
վրայ:

Bas-relief du roi Gagik Arzrouni
sur le mur extérieur de l'église
d'Achthamar.



Աղքամարի եկեղ. բարձրախանդակներ

Bas-reliefs de l'église d'Achthamar.



Աղքամար. Գագկիկ Արծրունու քարհամանդակը.

Achikhamar. Bas-relief du roi Gagukh Arzrouni.



Արծրունի թագավորների ազօրակեղին Աղքամարի
նկեղեցում.

Place réservée aux rois de la famille Artzrouni
dans l'église d'Achthamar.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

ՆՇԱՆԱ ԻՈՐ ՎԱՆՔԵՐ

Ե. Լալայեանի.

Ա.

ԱՂԹԱՄԱՐԻ Ա. ԽԱՉ ՎԱՆՔԸ.



Եղաղբութին. Աղթամարի սուրբ Խաչ կառողիկոսանիստ վանքը բարձրանում է Վանայ լճի Աղթամար կղզու 1) գրեթէ մէջ տեղում՝ Ծնորհիւ իւր այս տեղադրութեան, վանքը գանցում է Վասպուրականի համարեա կենարժնում, այնպէս որ մեծ դիւրութիւն էր ներկայացնում այդտեղ նստաղ Աղթամարայ տան կաթողիկոններին՝ նովուելու ամբողջ Վասպուրականը. Միևնոյն ժամանակ վանքը բաւական ապահովուած է, գտնուելով նախ ցամաքից ²⁾ 3 կիլոմետր հեռու մի ապառաժոտ կղզու վրայ և երկրորդ՝ միջին դարերում ամրացած է եղել մի ամրոցով և աշտարակաւոր պարսպով:

Վանքն օժտուած է նաև մի սքանչելի տեսարանով, որ բանաստեղծական աւիւն է ներշնչել Խաչատուր Աղթամարցուն և ոգնորել է Բաֆֆուն, ծովակի հետ խօսելու:

Հնումն ունեցել է նաև մաքուր, անազի ջրի աղբիւր, սակայն այժմ սա այլևս չի բղխում, այլ կայ միայն մի ջրհոր, որի ջուրը, սակայն, ազի է. Այժմ ջուրը բերում են նաւով Ախավանքից: Բուսականութիւնը թէև աղքատ է, սակայն կան նորատոնկ նշի և այլ ծառեր, որոնց ստուերի տակ կարելի է հանգիստ առնել:

Վանից կառքի մի ճանապարհ ճգլում է մինչև Ոստան և այստեղից էլ մինչև Ախավանք, որ հեշտութեամբ կարելի է անցնել Յ ժամի ընթացքում. իսկ Աւանց նաւահանգստից տեղական նաւերը կարող են հասնել Աղթամար և ժամում: Ախավանքից մինչև կղզին ^{1/2—1} ժամ է տեսում տեղական նաւակով:

1) Աղթամար կղզու մասին մանրամասն տեղեկութիւններ տես իմ աշխատութեան «Տեղագրութիւն» բաժնում:

Պատմական տեսութիւն.—Վասպուրականի տեղագրութեան մէջ տեսանք, թէ ինչպէս Ազթամարը հետզհետէ յառաջանալով Արծրունի Գագիկ թագաւորի ժամանակ դարձել է ամրոց և քաղաք-տեսանք նաև, որ քրիստոնէութիւնը տարածուել է այստեղ Թագիոս առաքեալի ձեռքով և պահպանել իւր գոյութիւնը շատ աւելի երկար, քան Հայաստանի միւս կողմերում. Ժ. դարում Ազթամարը դառնալով Վասպուրականի քաղաքական կենաքի կենտրոն, բնականաբար, դարձել է նաև կրօնականի, Գագիկ Արծրունին 915 թուին հիմնարկել է այժմեան Ս. Խաչ եկեղեցին, որ և աւարել է 921 թուին, Մանուէլ ճարտարապետի առաջնորդութեամբ: 1556 թուին սրա կաթողիկէն կործանուել է և վերաշինուել¹⁾: Այս եկեղեցին գարձել է Ազթամարայ տան կաթողիկոսութեան աթոռ, որի մասրամասն պատմութիւնը մենք անում ենք մեր այս աշխատութեան պատմական մասի մէջ, իսկ նրա գլխաւոր աղբիւր ձեռագիր ժամանականութիւնը զետեղում ենք Ձեռագրների ցուցակի մէջ:

Ս. Խաչ եկեղեցու հիւսիսային կողմին կից գտնուող ս. Սարգիս մատուռը միացըրել են եկեղեցուն, և դարձրել աւանդատուն, 1803 թուին թումա կաթողիկոսը շինել է արևմտեան կողմի գաւաթը, սոյն ժթ դարում Ախիջան և Գէորգ աղաները կառուցել են հարաւային կողմի զանգակատունը:

Վանքի նկարագրութիւնը.—Ազթամարի սուրբ Խաչ վանքը բաղկացած է ս. Խաչ եկեղեցուց, սրա ժամանակոց և զանգակատունից, Վերջին երկուսը յետոյ են շինուած և միանգամայն փշացնում են առաջնի սքանչելի տեսքը: Վանքին կից և կաթողիկոսարանը և ուսումնարանը, որ այժմ խարխուլ դրութեան են, սրանց փոխարէն Ալմավանքում, այսինքն կզզու հանդէպ, շամաքի ափին շինուած են կաթողիկոսարան և գլուխոցական բաւական լաւ շէնք:


Ս. Խաչ եկեղեցին շինուած է սրբատաշ, կարմիր քարից, որ ըերուած է Բաղիշի կոտոս գիւղից: Եկեղեցին խաչաձև է, անսին, պահպատած: տասնեվեցիկողմանի գմբէթով և կոնաձև կաթողիկէով, որի խաչը այժմ վայր է ընկած:

Այս եկեղեցու առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ չորս պատերը փոխանակ ուղղակի միանալու միմեանց հետ, մի մի մետրաչափ հեռու են մեռում, և հնգանկիւնանի, աշտարակաձև մի այլ պատով միանում, յառաջացնելով ներքուստ կիսարուր խորշեր: Նաև հարաւային և հիւսիսային պատերը, եկեղեցուն խաչի ձեւ տալու նպատակով, երկու կողմերից թեքուածներ ունին:

1) Ինձիննեան. Շնոր աշխա. հ. Ա. եր. 152:

Արևելիան և արևմտեան թևերը կողքերի թևերից աւելի երկար են:

Արևելիան և արևմտեան պատերի մէջ կան երկական կամարակապ ներսանկուածներ, արևելիանն երեքական, իսկ արևմտեանը միայն մի մի եռանկիւնածե որմնասիւներով զարդարուած:



Աղբամարտ Ս. Խաչ վանքը.

Խւրաբանչիւր պատի մէջ տեղում կայ մի երկար և նեղ պատուհան, նոնաձև քանդակների կամարով։ Բացի սրանցից կան նաև ուրիշ փոքր պատուհաններ, 12 հատ։

Եկեղեցու վերին եղբերը պատած են քիւով, որի տակ կան գանձան կենդանիների փոքրիկ բարձրաբանդակներ, սրանից

մօտ մի մետր ցած, եկեղեցու շուրջը բոլորում է մի երիզ՝ գլխաւորապէս խաղողի ողկոյզների և զանազան տեսարանների քանդակներից բաղկացած։ Սրանից էլ ցածը, պատի գրեթէ մէջ տեղից ամբողջ եկեղեցու շուրջը ցցուած են զանազան կենդանիների կիսարձաններ։ Մի քիչ էլ վար, ձգւում է նուան քանդակներից բաղկացած մի ուրիշ երիզ, որ նոյնպէս բոլորում է եկեղեցու շուրջը։ Այս երկու երիզների միջև կան հին և նոր կտակարանի սրբերի բազմաթիւ բարձրաքանդակներ և ամբողջ տեսարաններ սրանց կեանքից։

Եկեղեցու չորս ճակատն էլ զարդարուած են աւետարանիշների մի մի մեծապէր, մարդաչափ բարձրաքանդակիով։

Եկեղեցին ներքուստ անսիւն է, խաչածն, և չորս անկիւններում ունի մի մի կիսաբոլոր խորց։ Ութ քառանկիւնի որմասիւնների վրայ բոլորում են հայկական պայտաձեւ, բարձր կամարներ, որոնց վրայ հանգչում է տասնեղեցանկիւնանի, ցածը զմբէթը, կոնածն կաթուղիկէով։

Կողանը բոլորաձեւ է և կամարակապ, մէջ տեղում ունի մի երկար և նեղ պատուհան։ Սեղանը զարդարուած է մի զեղեցիկ խաչկալով։ Սեղանի երկու կողմը կան մի մի խորան, որոնց դռները բացւում են եկեղեցու անկիւններում բոլորող վերոյեցեալ խորշերի մէջ։ Խորաններն ունին մի մի սեղան, վէմ քարով և մի մի փոքրիկ պատուհան։ Արևմտեան կողմում խորաններ չկան։

Եկեղեցու հարաւային կողմը, բոլորաձեւ թևի մէջ կայ մի դուռն, որի վերև շինուած է մի վերնայարկ, յատկապէս Գագիկ թագաւորի և նրա ընտանիքի համար։ Սա ևս կիսաբոլոր է, կամարակապ և առջնում ունի մի մետր բարձրութեան պատ՝ հինգ կամարակալ բացւուածքներով, զարդարուած նուան քանդակներով և եղան, խոյի, վագրի, այծի, փղի և հորթի կիսարձաններով։ Կամարները զարդարուած են Աւետման, Մարիամ կուսի և Եղիսաբէթի և Յիսուսի ծննդեան իւղանկար պատկերներով։ Այս վերնատան մուտքն եղել է դրսից, ներքին դռան կողմը բարձրացող սանդուխներով, որ բանդուած են և սրանց անդում զանդակատան սիւնները բարձրացրած։ Այս վերնատան դռան երկու կողմում, ուրեմն եկեղեցու հարաւային պատի վրայ, քանդակուած են մի առիւծ և մի վագր, զլուխները խոնարհացրած՝ ի նշան հնագանդութեան։ Սրանից բարձր կան մի մի սրբի բարձրաքանդակ և մի եղնիկի ու արծուի քանդակ։

Եկեղեցու ներսը ևս զարդարուած է իւղաններէ պատկերներով, որոնք ըստ երեսյթին շատ հին են։ Սրանց մի մասն արդէն բոլորովին եղծուել է, ուստի և Աղթամարի վերջին կաթուղիկում,

Խաչառուրը կողակն ամբողջովին կապոյտ է ներկել տուել, միանգամայն մի քանի պատկերներ թողնելով։ Ընդհանրապէս նկատելի է, որ պատկերները բաւական նուրբ են եղել և բոլորն էլ Աւետարանից։ Ինչպէս Բեթղեհէմի մանկանց կոտորածը, Քըրիստոս Երուսաղէմի տաճարում, Քրիստոս Կանայի հարսանիքում, Քրիստոսի Երուսաղէմ մանելը, Ղազարոսի յարութիւնը, Քրիստոս Պիղատոսի առաջ, Քրիստոսի խաչելութիւնը և այլն։

Եկեղեցու արևմտեան կողմը, հիւսիսային խորշի մօտ, դրուած է կաթողիկոսական աթոռը, որ շինուած է մէկ ու կէս դար առաջ Աղթամարի Դրիգոր կաթողիկոսի ժամանակ։

Եկեղեցին ունի երեք դուռն և 16 պատուհան, ութ պատուհան էլ բացւում են գմբէթի մէջ, այնպէս որ լոյսը առաւ տութեամբ ներս է թափանցում։

Ինչպէս ասացինք, ամբողջ եկեղեցին ծածկուած է բարձրաքանգակներով, բաւական նուրբ, սակայն երբէք չեն կարող համեմատուիլ Անիի քանդակների հիտ։ Նկատելի է նաև, որ թէ մարդկանց և թէ կենդանիների մարմին մասերի համաչափութիւնը կատարելապէս պահպանուած չէ։ Լինչի կարծիքով այս քանդակները կարող են մի նշանաւոր օղակ կազմել ասորական արուեստի և արարական ու բիւզանդական արուեստների միջն։

Պատմական տեսակէտից ամենանշանաւոր քանդակը եկեղեցու հիմտղիր Գագիկ Արծրունու բարձրաքանգակն է, որ կերտուած է եկեղեցու արևմտեան պատի վրայ։ Գագիկը քանդուկուած է ամբողջ գիրքով, մօտ 1/4 մետր բարձրութեան, ձախ ձեռին ըրունած այս եկեղեցու մանրաքանգակը, որը ցոյց է տալիս աջ ցուցամատով։ Սրա առջն երկու հրեշտակ ըրնած են մի խաչ՝ շըրջանակի մէջ դրուած։ Գագիկի հանդէպ կանգնած է Յիսուս, այն գիրքով, որ կարծես օրնուում է Գագիկին, Յիսուսի ձախ ձեռքում կայ մի գիրք, որի վրայ գրուած է. Ես եմ լոյս աշխարհի, Գագիկի և Յիսուսի կողբերին կան մի մի վեց թևեան հրեշտակ։

Գագիկի գլխին կայ ականակուռ թագ՝ լուսապսակով պատճ, ուսերին ձգուած է մի վերարկու, ամբողջովին նշխերով պատճ, որոնց մէջ նկատելի են թիջուններ։ Մի գեղեցիկ ճարմանդով վերարկուն ճարմանդուած է կրծոսկրի մօտ, վերարկուի տակից հագած է մինչև գոսկատեղին հասնող, թևաւոր շոր, գըլխաւորապէս պարուրածե նշխերով։ Ինձ թւում է, որ այդ շորի կուրծքը եռանկիւնածե բացուած է, և տակից երևացող նոյնպէս պարուրածե նշխերով։ Հանգերձը շաղիկն է, որի նմանը այժմ ես գործ է ածում այս կողմերում։ Շալուարը միանգամայն նման է մեր նկարագրած տեղական շալուարին, միայն ոչ թէ

փողկի մի, այլ երկու կողմից ունի ասեղնագործ, լայն երկու Սրա երիզը պատած է երկու շարք պարուրաձև նշխերով: (Տես III նկարը):

Գագկի երկը բարձրաբանդակը գտնվում է արելեան պատի վրայ, խաղողի այգի ներկայացնող երիզի մէջ.—Գագիկ թագաւորը ծալապատիկ նստած է բարձի վրայ, աջ ձեռին ունի մի բաժակ, իսկ ձախ ձեռը ձգել է խաղողի մի ողկոյզի: Գագկի երկու կողմում կան մի մի մանկաւիկ, որոնցից մինը նուռ է քաղում, իսկ միւսը խաղող: (Տես IV նկարը):



Հատմական նշանակութիւն ունեցող երկու բարձրաբանդակ է կան հարաւային պատի աջ կողմը.—Սա ներկայացնում է մի ամբողջ տեսարան:—Երկու արջ միմեանց հետ կուռւմ են, սրանց թաթերի ներքեւ գտնվում են երկու բոթոթ: Արջերի վերև կայ-

մի թեաւոր առիւծ՝ թռչունի գլխով, իսկ սրանից բարձր, շրջանակի մէջ մի սրբի կիսարձանի երկու կողմը կան մի մի ամբողջական բարձրաքանդակի, լուսապստկ գլխներով և ֆարաջանման հանգերձներով, որոնցից մինը պարզել է ձեռքերը այնպէս, որ կարծես խաչակնքում է: (Տես բնագըի միջի պատկերը): Առաջնի գլխի մօտ զրուած է. Սր. Համազասպ Վասպուրականի իշխան, իսկ միստի, խաչակնքողի, նոյնպէս գլխի մօտ Տէր Սր. Սահակ եղբայր Համազասպայ, մարտիրոսք և վկայք Բախ: Սրանց հանդէպ քանդակուած է մի արծիւ, որ իւր մազիլների մէջ առած է մի պատճի: սրանից էլ վերև կայ գառնազը-լուիս, թեաւոր մի թռչուն, բարձրում մի սրբի պատկեր, շրջանակի մէջ¹⁾:

Այժմ սկսենք նկարագրել միւս բարձրաքանդակները՝ սկսելով բարձրից²⁾:

Եկեղեցու քիւի տակ փոքրիկ դիրքով քանդակուած են մի շռւն, որ հալածում է մի նապաստակի, միուրիշ շռւն, որ ընկած է մի այծեամի հետեւից, մի յովազ, որ պատառուառում է մի եղանիկ, երկու աղաւնիներ կտուց կտցի են տուած, մի որսորդ, որ բռնած է որսած ցլի վզակապից, չորս ոչխար նստած և երկու առիւծ, կանզնած: 10 մարդկային գլուխ և մի առիւծ (հիւսիսային պատի ձախ կողմը), մի առիւծ: 12 մարդկային գլուխներ, մի նապաստակ, մի առիւծ, դարձեալ մի նապաստակ, մի թըռչ չռւն, մի առիւծ, դարձեալ երկու նապաստակ, երկու թըռչուն կտուց կտցի տուած, ինչպէս նաև երկու աղաւնի նոյն դիրքով, միայն սրանց մէջ մի օձ, (որ եկել է թիւնաւորելու սրանց սի-

1) Բ. դարում արաբացոց Եղիտ ոստիկանը, Հարուն ամերապետի հրամանով մի պատրուակով կանչել է Վասպուրականի իշխաններ Գագիկ Արծրունու որդի Համազասպ, Սահակ և Մեհրուժան եղբայրներին իւր մօտ, Պարագ քաղաքը. սրանք էլ իրենց երկիրը յանձնելով, Դասիթ Մամիկոննեանին, գնացել են: Այստեղ Եղիտ ոստիկանն առաջարկել է կմմ հաւատափոխ լինել և կամ զրկուիլ կեանքցից: Համազասպ և Սահակն ընդիմադրել են և 786 թուիք ապրիլի 8-ին նահատակուել, իսկ Մեհրուժանն ընդունել է մահմեդականութիւն և գնացել ամիրապետի մօտ ու նրանցից ամբողջ Վասպուրականի իշխանութիւնն ստացել, սակայն Վասպուրական եկած միջոցին վերոյիշեալ Դաւիթ Մամիկոննեանը, որ նստում էր Վանում, գուրս է եկել նրա դէմ և սպանել նրան: (Զամշեան Բ, եր. 416—417).

*) Բրլորովին օրեկտիւ լինելու յուսով ես բարձրաքանդակներին սալիս եմ միայն այն անունները, որոնք նշանակուած են իրենց մօտ, եթէ անունը չի նշանակուած, ես միայն նկարագրում եմ, առանց ենթադրութիւններ անելու, թէ ումն է:

բային երջանկութիւնը), մի աղաւնու տակ էլ երկու ձու, մի թռչունի բուն, մէջը մի ձու, մի ցուլ, մի յովազ, երկու աքանաղ կռուելիս, մի առիւծ, մի գառ, մի եղջերու, մի խոզ:

Վերևի երիզը, որ կարծես ներկայացնում է խաղողի այգի, մեծ մասամբ ողկոյզներից բաղկացած լինելով, ունի մի շարք շատ հետաքրքրական տեսարաններ. այսպէս՝ եթէ դիտելու լինենք արեւելեան կողմից, Գագկի բարձրաբանդակի ձախ կողմից, կը տեսնենք.

Մի մարդ բռնել է փախչող նապաստակի պոչից, մի ձիաւոր նետանեղ է տրձակում մի արջի վրայ, որ արդէն իւր առաջի թաթերը ձգել է սրա նստած ձիու գամակին, մի մարդ մէջքին մի կողով, և ձեռքին մի զամբիւղ, մի մարդ, որ դաշոյնը խրել է մի արջի կողք, մի թռչուն, որ խաղող է ուտում, (հիւսային պատի վրայ). մի այգեպան, որ ձեռին բահ բռնած այգին է ջրում, երկու երիտասարդ կռուում են միմեանց հետ, մի երիտասարդ պարսատիկով խփում է խաղող ուտող թռչունին, մի նստած՝ գառ, որ մռութը պարզել է զէպի ողկոյզը, երկու բազ, երկու ուլ, մէկ ինծ, մի թռչուն և մի ճագար միմեանց մօտ կանգնած են. մի կին, որ հաց է տանում այգին ջրող մի ուրիշ այգեպանի, մի որսորդ իւր որսորդական շան և բաղէի հետ, որ ուզում է որսալ թփերի միջի արջն ու վարազը: Արևմտեան պատի վրայ. մի այժ իւր ուլիկի հետ, մի արջ, որի մի քոթոթը ծիծ է ուտում, իսկ միւսը բարձրացել է մէջքին, մի մարդ՝ ձեռին ձմերուկ, մի մարդ և մի արջ միմեանց հետ կռուելիս, իսկ մի ուրիշ մարդ ծառը բարձրացած, երկու խոյ կռուելիս, մի որսորդ խփում է արդէն նետահար եղած արջի:

Հարաւային պատի վրայ՝ երկու գօտեմարտիկներ գօտեմարտելիս, որոնցից մինի ոտից կծում է մի շուն մի մարդու զլուխ, երկու երիտասարդ ձեռներին խաղողի որթեր, երկու թռչուն, որ կացահարում են ողկոյզներ, մի մարդու զլուխ, երկու երիտասարդ, որ մեծ քանակութեամբ խաղողի ողկոյզներ են հաւաքել, Մի մարդ՝ կողովը ուսին, մի մարդ՝ հեծած մի արջի մէջքին և նրա ականջներից բռնած, մի երիտասարդ՝ երկու ձեռքը զլուխ վրայ զբած զարմացմամբ նայում է մի ուրիշ երիտասարդի, որ նիզակով խփում է մի արջի, որի մօտ զանւում է մի մարդու զլուխ. մի մարդագլուխ առիւծ, մի թռչուն և մի մարդ՝ ցոււալը ուսին. մի մարդ, որ խաղողի ողկոյզը ծնել է և որթի տակից մի նապաստակ է փախչում. մի աղուէս, որ խաղող է ուտում և մի որսորդ, որ իւր որսորդական շունը աղուէսի վրայ է արձակում, մի մարդ՝ գառը ուսին, երեք թռչնիկներ խաղողի որթի վրայ

նստած, մի մարդ և մի արջ կոռւելիս, մարդը դաշոյնը խրել է արջի փորը, երկու մարդկային գլուխները լնկած են ճիւղերի մէջ, իսկ սրանց մօտ մի չոքած մարդ՝ ձեռները վերև պարզած, երկու թռչուն, մէջ տեղը մի ծաղկեփուշնջ. Մի մարդ ծալապատիկ նըստած՝ ձեռները պարզել է խաղողի ողկոյզին, սրա մօտ մի տղայ ուսները պարզած կանգնած է և նայում է մի արջի, որ խաղող է ուտում. Միւս կողմն էլ մի որսորդ պարսատիկ է արձակում մի առիւծի վրայ. Մի թիչ հեռու երկու թռչուն կտուց կտցի են տուել, մի մատակ գոմէշ ծիծ է տալիս իւր հորթիկին, և մի մարդ, որ բռնել է մի կովի եղջիւրից.

Այժմ անցնենք միւս բարձրաբանդակներին, որոնց մեծագոյն մասը կրօնական են.

Արեւելեան պատի զբեթէ կենդրուում, ներսանկուածների վերև բոլորող կամարների միտցման տեղում մի շրջանակի մէջ քանդակուած է Աղամը՝ մատը պարզած դիրքով, և սրա երկու կողմում գրուած է. Եւ կոչեաց Աղամ անուանս ամենայն անառնց և գաղանաց և կարծես իրը բացարութիւն այս խօսքերի՝ Աղամի երկու կողմը քանդակուած են բամենայն անասունք և գաղանք և սրանք այնքան շատ են, որ մի շարքով շարուած են եկեղեցու չորս պատի վրայ էլ Սրանցից շատ շատերը ոչ թէ բարձրաբանդակ, այլ կիսարձաններ են, մօտ կէս մետրաչափ գուրս ցցուած պատից, եթէ սկսենք դիտել Աղամի ձախ կողմից՝ կը նկատենք. —առիւծ, գայլ, արջ, ընձուխտ, վայրի ցուլ, գայլ, եղ. եղնիկ, խոյ, ոչխար, գոմէշ, ձի, ջորի, ուղտ, հնդկան, բաղէ, արծիւ, սիրամարդ, փասիան և այլն.

Այժմ անցնենք այն բարձրաբանդակներին, որ գտնուում են խաղողի և նուան երիշների միջն.

Հիւսիսային պատի լուսամտի աջ կողմում քանդակուած է կենաց ծառը, որի բնին փաթաթուած է գաղանի թաթերով օժտուած օձը, և խօսում է իւր առջն չոքած Եւայի հետ. Միքիչ հեռաւ, լուսամտի ձախ կողմում քանդակուած են Աղամ և Եւայի՝ մօտ մէկ ու կէս մետրաչափ բարձրաբանդակները, կենաց ծառի երկու կողմը կանգնած, Եւան ուտում է բարւոյ և չարի գիտութեան խնձորը և յորդորում Աղամին՝ իւր օրինակին հետեւու.

Նոյն պատի վրայ կայ նաև Սամսոնի երկու մետր բարձրութեան բարձրաբանդակը, աջ ձեռում բռնած փղշտացու գլուխը՝ մազերից. Սրա մօտ Եղեկիէլ մարգարէն, որի աջ կողմից մի ուրիշը, իսկ բարձր, շրջանակների մէջ երեք կիսարձաններ. Փոքր ինչ հեռու դարձեալ Սամսոնը, որ սուրն առիւծի երախն է իւր-

բում, սրանից վերև երկու աքաղաղ կռւում են, իսկ ներքեւ կանգնած է մի մարդագլուխ, թևաւոր թռչուն:

Հիւսիսային պատի աջ կողմում Ամովս մարդարէի, և Կիրակոսի և մի այլ սրբի կիսարձաններ շրջանակներով, որոնց ներքեւ ո. Թէօգորոս, Ս. Սարգիս և ո. Գէորգ, երեքն էլ ձիւոր, առաջինն սպանում է մի վիշտ, երկրորդը՝ մի յովազ, իսկ երրորդը՝ ձեռները ու ոտները կատուած մի մարդ:

Հիւսիսային պատի ձախ կողմում կան երկու խոյ, կուրծք կրծքի տուած և գլուխները հակառակ կողմ դարձրած: Սրանց ներքեւ կայ մի չալմաւոր և ֆարաջով մարդու ամրողական բարձրաբանդակ, երկու ցուցամտակը պարզած, աջ կողմում մի ուղար: Սրա մասին աւանդուրար պատմում են, թէ Մահմէդի բարձրաքանդակն է, պատուիրում է իւր հաւատացեալներին ջլսասել այս եկեղեցուն: Այս «Մահմէդի» ձախ կողմում կանգնած է Սոսյէ մարդարէն, իսկ աջ կողմում, ուղարից ներքեւ, մի արծիւ՝ մագիլներում մի նապաստակ բռնած: մի քիչ ցած՝ երկու հնդկահաւ, վկերը միմեանց փաթաթած և կատւցները միմեանց յենած:

Արևելեան պատի երկու ներսանկուածների միջև բացուող պատուհանի գլխին բոլորում է ողկոյզի քանդակներից բարձկացած մի կիսարողոր կամար, իսկ աջ ու ձախ կողմերին մի մի սրբի, թերևս Թագիսու և Բարդուղիմէոս առաքեալների բարձրաբանդակ: Սրանց ներքեւ մի առիւծ, մի յովազ և մի եղնիկ: Սըրանցից աջ, մի կլոր շրջանակի մէջ քանդակուած է մի կիսարձան, աջ կողմում Յովհաննէս Մկրտչի, ձախում ո. Գրիգոր Լուսաւորչի բարձրաբանդակները, իսկ սրանց ոտների մօտ մի առիւծ:

Ձախ ներսանկուածից դէպի ձախ քանդակուած է Եղիա մարդարէն, առջևում մի կին չոքած: գլխի վերև երկու կիսարձաններ, մի քիչ հեռու մի ուրիշ սրբի բարձրաբանդակ, ձեռին մի թերթ բռնած:

Հարաւային պատի աջ կողմում: Հեղի քահանայի անդրին, Սաւուղ թագաւորի ամբողջական բարձրաբանդակը, որի վերև Սամուել մարդարէի կիսարձանը շրջանակում, սրանց հանդէպ Դաւիթ մարդարէն պարստիկը ձեռին, մաղախն ուսին, առջևում կանգնած Դողիաթը երկու մետր բարձրութեան, սուրը աջ ձեռին, վահանը կրծքին: իսկ այս երկուսի միջև մի այժ հանդիսացնած:

Դաւիթ մարդարէի կեանքը քանդակուած է նաև հիւսիսային պատի ձախ կողմը: այսանդ Դաւիթ մարդարէն պատառում է մի առիւծի երախ, որից վերև քանդակուած է մի խոյ, մի քիչ հե-

ուռ մի յովազ, որ պատառում է մի այժ, սրանից էլ վերև մի արջ, որ խաղող է ուտում, մի թիչ էլ հեռու դարձեալ Դաւիթ մարգարէն նիզակը խրում է մի առիւծի կուրծք, իսկ սրանից էլ չերև երկու առիւծ՝ յետոյք յիտոյքի յենած և գլխները միմեանց դարձրած, աւելի բարձր՝ մի աղուէս, որ փախչում է:

Հարաւային պատի ձախ կողմում. Արրանամը զոհում է իսուանակին, մի խոյ կախուած է ծառից և Տիրոջ աջը ցոյց է տալիս խոյը. Արրանամին. փոքր ինչ հեռու երկու նապաստակ մի թուփ են. կրծում, մի ճրշտակ թեատրած կանգնած է, Քրիստոս, աթոռի վրայ նստած է, որի վերև կախուած է Յովէլ մարգարէի կիսարձանը շրջանակով. մի թիչ հեռու Աստուածածինը՝ Յիսուս գրկում, կողքերին Գարբիէլ և Միքայէլ հրեշտակապետները, մի թիչ հեռու մի այծեամ, որի ոտների տակ երկու թոշուն՝ կառուցներում մի օղակ բռնած: Նոյն, հարաւային պատի ձախ. կողմում քանդակուած է Յովնան մարգարէի նաւը, տակը կէտ ձուկը, փոքր ինչ հեռու կիտը փսխում է Յովնանին. Յովնանը դժմնու տակ քնած, Յովնան բարդելիս, նիսուէի. թագաւորը սարձերի վրայ նստած, չորս կանայք ձեռները երեսներին դրած ողբում են:

Յովնանի նաւի վերև. կան. Ստեփաննոս Նախավկայի, Առ փոնիքասի, Ազարիա մարգարէի և մի այլ սրբի կիսարձան, որի անունը չէ գրուած: Այս բոլոր, կիսարձաններն էլ պատած են շրջանակներով.

Գմբէթը տասնեւեց անկինանի է, զարդարուած ութ պատռհանով, որոնց վրայ բոլորում են ծաղիկների և կաքաւների քանդակներով գեղազարդուած կամարներ: Թանդակների մի գեղցիկ երիգ բոլորում է հիմբի մօտ, իսկ վերին. մասում, քիւի տակ, փոքրիկ բարձրաքանդակների. մի մեծ շարք պատռմ է ամբողջ գմբէթը, այսպէս՝ արևելեան կողմում կայ մի նապաստակ, մի շուն, մի խոզ, մի եղ, մի առիւծ, մի կով, մի առիւծ, մի գառ, մի շուն, մի առիւծ, 2 խոյ գլուխ գլխի տուած, մի թոշուն, մի ձի, մի առիւծ, մի խոյ, մի նապաստակ, մի աղուէս. հարաւից՝ մի նապաստակ, մի շուն, մի այժեամ, մի առիւծ, մի նապաստակ. Արևմուտքից՝ մարդու երկու գլուխ, մի նապաստակ, մի առիւծ, երկու այժեամ, մարդու 2 գլուխ, երկու նապաստակ, մի այժեամ, մի առիւծ, մի նապաստակ, մի յովազ. հիւսիսային կողմում մի ճագար, մի շուն, մարդու մի թագակապ գլուխ, մի առիւծ, մի նապաստակ, մի կով, մի մարդու գլուխ, մի շուն, մի առիւծ:

Զանգակատունը գանւում է հարաւային գուան առջև: Չորս քառանկիւնի սիւների վրայ բոլորում են պայտաձև կամարներ,

որոնց վրայ կը կին բարձրանում են նոյնպիսի սիւներ, ունենալով նմանօրինակ կամարներ։ Վերջիններիս վրայ հանգչում են վեց կլոր սիւներ, կրկելով վեց անկիւնանի մի գմբէթ, որից կախուած են երկու զանգակ։

Դաշտի հասարակ շէնք է, և դժբախտաբար ծածկել է եկեղեցու արևմտեան ճակատի երկար արձանագրութիւնը։ Չորս քառանկիւնի ամբողջական և տաս կիսասիւնների վրայ բոլորում են պայտաձև կամարներ, պահելով կամարակապ ձեղունը։ Ունի երկու հասարակ դուռ և 9 փոքրիկ և նեղ պատուհան։

Ս. Խաչի հիւսիսային դռան հանդէպ ևս շինուած են երկու փոքրիկ, հասարակ, կամարակապ մատուռներ, որոնց մինում դըրուած է Մեռոնի կաթուան, իսկ միւսը ծառայում է որպէս աւանդատուն, ուր զգեստաւորում է քահանան, որովհետև եկեղեցու միջի աջակողմեան խորանում պահուում է Կենաց փայտը, իսկ ձախակողմեանում եկեղեցական իրեր և մեռոնի վերաբերեալ նիւթեր, որոնց համար առանձին առանձին խորշեր են շինուած պատի մէջ։

Եկեղեցու երկարութիւնն է 15, 40 մետր, լայնութիւնը 12, 60 մետր, բարձրութիւնը մոտ 20 մետր. կողակի երկարութիւնն է 4, 10 մետր, խորութիւնը 4, 30 մետր. երկու կողքի բոլորաձև թեերի երկար. է 3, 35 մետր, խորութիւնը 2, 55 մետր. արևմտեան խորշի երկարութիւնն է 3, 35 մետր, խորութիւնը 3, 65 մետր. խորանների երկարութիւնն է 3, 60 մետր, լայնութիւնը 1, 10 մետր։

Կղզու արևելահիւսիսային ծայրում, լեզուածեն հրուանդանի վրայ, ուր գեռ ևս մեռում են Գագկի շինած աշտարակի կիսաւեր պարիսպները, կայ նաև մի փոքրիկ մատուռ, որ աւանդորէն համարում է Գագկի ամուսին՝ Թամար թագուհու աղօթատեղին, ուր և, ասւում է, թէ ամփոփուած է Յովհաննէս Զ. Դրախտանակերցի պատմաբան կաթողիկոսի մարմինը։

Ս. Խաչ եկեղեցու հարաւ-արևելեան կողմում կայ ս. Ստեփանոս անունով մի կիսաւեր, փոքրիկ եկեղեցի, որ շինուել է 1293 թուին Ստեփաննոս կաթողիկոսի ժամանակ Հոռոմշահի որդի Սարգսի և Ստեփաննոսի ծախքով։

Կղզու արևելահարաւային ծայրում ևս կայ երկու մատուռներ, մինը ս. Գէորգ, միւսը թերեւս ս. Աստուածածին անունով, որ այժմ կոչում է Կարմիր եկեղեցի, որովհետև կարմիր քարից է շինուած։

Ս. Խաչ եկեղեցու մեծ մասամբ արևելեան կողմը զանուում են Աղթամարայ կաթողիկոսների շերիմմները, որոնց տապանա-

քարերը ներկայացնում են քառանկիւնի մի քար՝ ծայրին մի խաչքար կանգնեցրած:

Ա Ր Ճ Ա Յ Ա Գ Ր Ո Ւ Բ Ի Ւ Յ Ե Ր

Աղթամարի Ս. Ստեփանոս եկեղեցու դրան ճակատին.

Զիմ (—1293)

Ի հայրապետութեան Ցոն Ստեփանոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբանեալ կրանատրացն Սարգսի եւ Ստեփանոսի որդեացն Հոռոմշատի յարդար վաստակոց իւրեանց. կատարեցաւ յիշատակ հոգոց իւրեանց եւ ծնողացն եւ ազգականացն. որք հանդիպի յլշեցէք 'ի Քս.

Աղթամարի դարպասի հարաւային դրան ճակատին.

Ի Ռ.Մ.Ժ.Թ. Թվին Հայոց (—1763) եւ շնորհօքն Քսի շինեցաւ դարպասս ծնուամբ Թումայի կաթողիկոսի Աղթամարայ, որք աղօթէք տուք զողորմիս:

Ս. Խաչ եկեղեցու խաչկալի վրայ.

Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյս Ցոն Գրիգորի կաթողիկոսի շնորհօք Ցոն մերոյ Յսի կառուցի խաչկալս արդեամբք Աղթամարայ մեծի եւ փոքրու եւ քաղականից ոսկերչոց եւ աշխատութեամբ եւ մասնակցութեամբ Ցեառն Սահակայ վարդապետի Խարքեթոցս. որք պատահիք լի քերանով Ած ողորմի ասացէք նոցա. Ի թվոջ հայոց Ռ.Մ.Ն. ամէն. (—1756)

Աղթամարի արևմտեան դրան ճակատին.

Շնորհօքն Ք. շինեցաւ զափիթս ի թվին Ռ.Մ.Ժ.Թ. (—1803) արդեամբ Թումա կաթողիկոսին ու ծնուամբ ոստնեցի ուստա Նախապետին ու ոէս Թաթոսին, որք կարդայք տուք զողորմին:

Վեհարանի դրան ճակատին.

Վեհարանս եւ դպրոցս նոր հիմանց կանգնեալ ծօնեմ քազմակալուս իմ ազգին, ի կայսրութեան ինքնակալին օսմանեան Համիտ երկրորդ վեհապետին. յաղթական թէպէտ

Եռանդ սիրոյս վաղուց ստիպէր, սայց զբաղմունք իմ հոծ գործով ոչ ներէր, թան զամէն ինչ նուիրական էր հոգսոց, ընդ շինութեանց զբարոյական առեալ լոյս, ուսումնասէր մանկամբ հայոց ջանալ միշտ, զիմ սպակիր ժողովրդներ ան ջնջել վիշտ. Տէր Խաչատուր կաթութիկոս Խշոռնցի, ճեր աղօթից կարօտ ծառայ Յիսոսի:

Վերնայարկ սենեակների ճակատին.

Սենեակը այսորթիկ հիմանց նորոգի ջանիւք Յակոբա, Եպիսկոպոս թնիկ Խիզանցի Խարիսոյ գիտացի. բնակողք 'ի սմամիշտ տուք զողորմի: Թվ. Խթիթ. (=1873)

Զանգակատան վրայ.

Եինեցաւ զանգակաւունս արդեամբը աստուածատէր իշխանացն Ախիջան եւ Գեորգ աղայիցն յանուն սք. Համբարձման ի յիշատակ ննշեցնլոցն եւ կենդանեացն:

Ս. Խաչ եկեղեցու ձախակողմեան աւանդատան մի կողմում.
... դարուն կտակի իմով ճեռամբ Գագկա հաց արքայիս...

Ս. Խաչ եկեղեցու հարաւային կողմը, գրսից, տանիքի մօտ.
... խարճիակալ թագաւորութե... հայկազնան...ցի զգութէթ... Հայոց:

Տ ա պ ա ն ա պ ի ր ն ե ր

Կղզու ափին ընկած մի տապանաքարի վրայ.

'ի թվին ԶԴՀ. (=1348) վախճանեցաւ աղքատասէր հայրապետն Ստեփանոս կաթողիկոս ամենայն Հայոց. ազգաւ Արծրունի. Այ ողորմութիւն աթոռակից արևացէ զնա սըրբոց հայրապետացն. ամէն.

Թ. Վ. Պ. Ժ. (=-1364) Հայոց կաթողիկոս Տոն Զաքարեայ կարողութեամբ Այ եւ աջողութեամբ նորին կանգնեցի շխաչս բարեխառա առ Ած հոգսոց իմոյ, որը Երկիրպազանէր յիշեցէր ի Քս Յս.

...Գուտօնի թէգ եւ զկողակիցն Մէլիք Խաթոն յիշեցէք
ի Քս. Թվ. Պիծ. (=1376)

Թվ. ՊՂԴ. (=1444) Ես Տը Զաքարիա կաթողիկոս
կանգնեցի խոչս բարեխասա առ Ած սակս փրկութեան Մե-
լիք Ստեփանոսի եւ Խաթոն Մէլիքին ծընաւզացն Ցող-
շան թէկի Ցովլաթ շային Ասլան թէկին որ Երկիրպազանէք
յիշեցէք ի Քս.

Սրազան յակուցեալ Պետրոս կաթողիկոս. Թվ. Ռմ
ԺԹ. (=1660).

Ով սուրբ Նշան տէրունական սեղան գառին զենման,
բարեխասան ի մեծ ատեան, վասն Թումայ կաթողիկոսին
եւ ծնողաց..... Թվ. ՌՄՀ. (=1781).

Ի յայս գուբս անժուկ անփոփի մարմին անոն անան-
փոփի Մարկոսի վեհին, սիրելի ազգին 'ի սէր հայ ազին ե-
ղեալ անձնուէր սիրով Մտաղիք 1788.

Կարապետ կաթողիկոս. ՌՄԴՆԸ. (=1799)

Խաչս բարեխասա առ Ած վասն փրկութեան հոգոյն
Խաչափոք կաթողիկոսին Թվ. ՌՄԳԴ. ին. (=1814)

Խաչս բարեխօս է առ Ած վասն փրկութեան Յոհանէս
կաթողիկոսին, Թվ. ՌՄՀԴ. (=1825)

Խաչս բարեխօս է առ Ած վասն փրկութեան Յոհաննէս
կաթողիկոսին ՌՄՂԲ. (=1843).

Խաչս բարեխօս առ Միածին,
Սակս փրկութեան հոտապետին,
Վեհ Խաչատրոյ սրբազանին,
Որ փոխեցաւ առ Ցէր յերկին.
'ի մի հազար եռ հարիւլին,
Հայոց մեծաց թուականին:
Յունիս ամսոյ Երկտասնեկին:

Օծեալ 1893 սեպ. 12.

Խամար շիրմիս, իմ սիրոն այցելու, առնել քեզ վլուտիցս ո՞ն չունիս լեզու, շուառ ի զահ տունս թէկեալ նիզակակաց ազգիս դառն ցաւոց հնծովթեանի թոց տոշորեալ հայրապետն եմ Ծաշտոնի, որ Խաշատուր անծս խաչին զոհեցի լիանեալ շինովթեանց փոնջս զանազան բամենալ խաչս եւ աջս հինսի թանգարան կաթսայ ս. իտղյն, աղամին օծան ամետարանս, թանգ շուրջառ, զաւազան թողեալ յիշատակ, նուէք տաճարիս, ունէի դեռ նոր գործոց տենչս ի յիւտարդարես ք. Համիդ վեհ սովթան կոշեաց զիս ի փառս յառաջինս նըշան, ի մեծ զարմանըս զահիս Արծրունեան. կեանքս, խիղճս եւ հոգիս այլ սովոք շլցան ու հողմովք ժանդից հառաչքս ոչ շիշան սէրս յոյս ի Յիսուս՝ բաժինս այս տապան:

Ես Թումայ կաթողիկոս հայոց կանգնեցի զխաչս քառեխաս առ Ած եղբալն իմոյ պարոն Աշոտին եւ որք երկիր պազանէք յիշեցէք ի Քս. զմեղապարտ Վարդանս զկազմող սորա յիշեցէք ի Քս.

Ես Տք Փիլիպոս կանգնեցի խաչս քառեխաս առ Ած կենակցին. իմոյ Դինէի և որդոց իմոյ Խաշատորոն եւ Միքայէլին որ յայսմ ասուր փոխեցաւ առ Ած եւ եթող ինժ սուր անմխիթար. որք երկրպազանէք յիշեցէք 'ի Քս. *)

*) Ս. Խաչ Վանքի այժմեան միաբանութեան մասին տես Տեղագրական բաժնում, Աղթամարայ տան կաթողիկոսութեան պատմութեան մէջ, վանքի ձեռագիրների մասին՝ Ձեռագրների բաժնում և մասունքների ու եկեղեցական սպասների մասին նըշանաւոր վանքերի նկարագրութեան վերջում: